ՏԱՐԱԾԱԺԱՄԱՆԱԿԱՅԻՆ ԸՆԴԳՐԿՈՒՄՆԵՐԸ ՂԱԶԱՐՈՍ ԱՂԱՅԱՆԻ «ԻՄ ԿՅԱՆՔԻ ԳԼԽԱՎՈՐ ԴԵՊՔԵՐԸ» ՀՈՒՇԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ

ԱՆՆԱ ԹՈՐՈՍՅԱՆ

Հուշագրության ժանրի առաջին դրսևորումները նկատվել են դեռևս անտիկ մտածողների գործերում, երբ հեղինակները՝ որպես ականատես-հուշագրողներ, ներկայացնում էին ժամանակաշրջանի պատմությունը, նշանավոր մարդկանց, դեպքերն ու իրադարձությունները: Հուշագրության մեջ արտացոլվում է ոչ միայն սոցիումը, այլև նույն ժամանակաշրջանի գրական կյանքն ու գեղարվեստական մտքի շարժումները: Հենց դրանով էլ վավերական այդ երկերն արժևորվում են որպես գրական-գեղարվեստական մտքի ուրույն դրսևորումներ: Ասել է թե՝ հուշագրությունը՝ որպես յուրօրինակ փաստագրություն, կարևորություն է ձեռք բերում ժամանակակից գրական-գեղարվեստական գործընթացում՝ վավերականացման մեջ: Այս ժանրատեսակը չունի վիպական կերպարներ, ավանդական դիպաշար, իսկ հեղինակային նարատիվն էլ համեմատաբար քիչ է օգտագործում գեղարվեստական պատկերավորման միջոցներ ու հնարքներ:

Հուշագրության ժանրի առաջին նմուշներն արևելահայ գրականության մեջ երևան են եկել 18-րդ դարի վերջերից: Հիշատակելի են հատկապես Հովսեփ Էմինի՝ «Հովսեփ Էմինի կյանքն ու արկածները» (1792), Հարություն Արարատյանի՝ «Հարություն Արարատյանի կյանքը…» (1813), Խաչատուր Աբովյանի «Դորպատյան օրագրերը» (1830-35), Մեսրոպ Թաղիադյանի «Ճանապարհորդութիւն ի Հայս» (1847) և այլն:

1893 թ. «Մուրճ» ամսագրում տպագրվում է Ղազարոս Աղայանի «**Իմ կյանքի գլխավոր դեպքերը**» հուշագրական երկը, որը համապարփակ տեղեկություններ է բովանդակում թե՛ հեղինակի կյանքի, թե՛ հայկական իրականության և թե՛ գրական-մշակութային անցուդարձերի վերաբերյալ: Ի դեպ, Ղ. Աղայանի և մասնավորապես հիշյալ գործի մասին բանասիրությունն արդեն երկար տասնամյակներ պահպանում է անբացատրելի լռություն, և սույն հոդվածի նպատակն է հայ ընթերցողին վերստին հիշեցնել հիրավի տաղանդաշատ այս գրողի ու նրա գրական ժառանգության մեջ ուրույն տեղ զբաղեցնող հուշագրական ստեղծագործությունը և ցույց տալ նրա յուրահատկությունները:

Դիտելի է, որ Ղազարոս Աղայանից հետո ևս մի նշանավոր վիպասան՝ Պերճ Պռոշյանը, 1894-ին տպագրեց հուշերի սեփական պատա-

ռիկները՝ «Հուշիկներ» ընդհանուր խորագրով, որի առաջաբանում նա ներկայացրեց ինքնակենսագրություն գրելու իր շարժառիթը: «Փութացրեց ինձ մանավանդ դարուս նշանավոր մատենագիր Մեսրոպ Թաղիադյանցի կենսագրությունը հայր Հովհաննես Մկրյանի աշխատասիրությամբ»[1],- խոստովանում է վիպասանը: Դրանից հետո մամուլում ծայր առան տարաբնույթ քննարկումներ: «Մշակի» էջերում Պռոշյանի երկերի մասին հայտնվեցին աննպաստ, երբեմն բացահայտ թշնամական բնույթի կարծիքներ: Հոդվածագիրներից մեկն, օրինակ, նկատում էր, որ Աղայանն առաջինն է տպագրել «Իմ կյանքի գլխավոր դեպքերը» հուշագրությունը, և նրան է պատկանում ժանրն սկզբնավորողի առաջնությունը. «Ինքնակենսագրություն գրելը այս վերջին ձևով բոլորովին նոր երևույթ է հանդիսանում մեր գրականության մեջ. այդ փորձի աննախանձելի պատիվը պատկանում է մեր շնորհալի վիպագրող Ղազարոս Աղայանցին, որի դափնիները, երևի, հանգստություն չեն տվել Պերճ Պռոշյանցին…»[2]: Հոդվածագիրը ոչ միայն չի կարևորում «Հուշիկների» գրությունը, այլև դրանք անվանում է հեղինակի գրական «նեյնիմներ»: Պռոշյանի նկատմամբ ընդգծված թշնամական վերաբերմունքը, անտարակույս, հանգեցնում էր գրական իրողության աղճատման: Այդ տեսակետից հատկապես նշելի է դրամատուրգ, գրական-հասարակական գործիչ Էմին Տեր-Գրիգորյանի՝ «Մշակին» ուղղված մի նամակը, ուր գրված է. «…Այդ նույն «Հուշիկները» Պռոշյանը ուներ դեռ 1884-85 թվերին: Ես այդ հիշում եմ, որովհետև ես խնդրեցի այդ ժամանակ նրանից, որ նա թույլ տա տպագրությամբ հրատարակել, բայց պայմանների մեջ չհաշտվեցինք, և գործը հետաձգվեց մինչև այսօր»[3]:

«Իմ կյանքի գլխավոր դեպքերը» հուշագրությանը ժամանակագրական առումով նախորդել էին Աղայանի՝ ինքնակենսագրական մի շարք հոդվածներ՝ «Մի կտոր իմ ինքնապատում կենսագրությունից» (1889), «Մի երես մեր նորագույն պատմությունից» (1890), «Իմ տեսակցությունը Խրիմյան Հայրիկի հետ» (1892), իսկ 1866-ին արդեն նա գրել էր ինքնակենսագրական նշանավոր վեպը՝ «Արություն և Մանվելը»: Գրական այս աղերսները վկայում են, որ հուշագրություն գրելու համար հեղինակը բավական ժամանակ է տրամադրել և դրա շուրջ երկար խորհրդածել:

Երկի սկզբում Աղայանը նշում է, որ դեռևս 1892 թ. ռուս գրականագետ Յուրի Վեսելովսկին նամակով խնդրել է իրեն ուղարկել համառոտ ինքնակենսագրություն, սակայն ժամանակի սղության պատճառով չի կարողացել կատարել նրա խնդրանքը: 1893-ին լույս է տեսնում Յու. **Վեսելովսկու «Армянские беллетристы»** ժողովածուի առաջին հատորը, ուր զետեղված էին Աղայանի որոշ գործեր: Վեսելովսկին ցանկանում

---

[1] **Պ. Պռոշյան**, Երկերի ժողովածու յոթ հատորով, հ. 7, Եր., 1964, էջ 210:
[2] «**Մշակ**», Թիֆլիս, 1894, հոկտեմբերի 15, թիվ 119, էջ 1:
[3] Նույն տեղում, հոկտեմբերի 27, թիվ 124, «Խառը լուրեր»:

էր հայ գրողի կենսագրությունն ընդգրկել գրքի առաջին հատորում: Աղայանի՝ 1893 թ. փետրվարի 15-ին Յու. Վեսելովսկուն հասցեագրված նամակում կարդում ենք. «Ես չէի կարող իսկույն Ձեր առաջարկությունը կատարել, պետք է շտապով ետ դառնայի գյուղ, այս պատճառով նամակը հանձնեցի պ. Շիրվանզադեին և խնդրեցի, որ կատարե Ձեր առաջարկությունը: Նա հանձն առավ և ես ալ միամտվեցա: Բայց այսօր ահա իմացա, որ նա ոչինչ չի գրել՝ նրա համար իբր թե ուշ է համարել, որովհետև կարդացել է «Նոր-Դար»-ում, որ ժողովածուն արդեն մամուլի տակ է և այս օրերս լույս կտեսնի: …Ես հիմա գրում եմ իմ կենսագրությունը և շուտով տպագրության կտամ»[4]:

Արդեն կես դար ապրած և կայացած գրող Աղայանը գրել է իր կյանքի գլխավոր դեպքերի մասին: Նա այս ժանրատեսակին է դիմել պատկառելի տարիքում՝ ինքնախոստովանության պես գրելով. «Մարդիկ սովորաբար հետաձգում են իրենց կյանքի և կտակի գրելը, ենթադրելով՝ որ դեռ ապրելու են, ուրեմն և ժամանակ կունենան այդ բանն անելու՝ մոռանալով ավետարանի ասածը, թե՝ «Ոչ գիտես յորում ժամու գող գայ»» (հ. 4, էջ 325): Հուշագրական այս երկը սոսկ կենսագրական փաստերի վավերագրություն չէ. այն մի կողմից համապարփակ պատկերացում է տալիս ժամանակաշրջանի հայ կյանքի, կենցաղի, բարքերի մասին, մյուս կողմից՝ տարբեր դեպքերի միջոցով բացահայտում մի շարք իրադարձություններ ու անձանց, պատկերացում տալիս գրողի կրոնական ու քաղաքական համոզմունքների, մշակութային և հասարակական-քաղաքական գործիչների հետ ունեցած առնչությունների մասին: Վերնագիրն անգամ հուշում է, որ «գլխավոր» են պատկերված դեմքերն ու դեպքերը: Աղայանն առանձին դիմանկարներ թեև չի ստեղծել, սակայն գրողի **նկարագրություններն ու բնութագրումներն այնքան կենդանի են և դիպուկ, որ հաճախ մոտենում են գրական դիմանկարի ժանրին:** Գրողը առանց քողարկումների հակիրճ բնութագրումներով ներկայացնում է ժամանակակից դեմքերի հետ իր փոխհարաբերությունները:

Աղայանի հուշագրությունը, կարելի է ասել, «**եսակենտրոն**» է. հիմնական իրադարձությունները ծավալվում են հեղինակի անձի շուրջ և ուղեկցվում են նրա ներաշխարհի և հոգեկան ապրումների բացահայտումներով, երբեմն ստեղծագործական ընթացքի մասին **անձնական գնահատությամբ**: Անձնական ներզգացումների գերակշռությունը միևնույն ժամանակ զուգորդված է իրականության, մասնավորապես՝ ազգային կյանքի, ավանդական գյուղական իրականության, ընտանեկան հարաբերությունների ճանաչողության հարուստ և հետաքրքրական դրվագներով: Գրական այս երկին հատուկ հմայք են հաղորդում նաև

[4] **Ղ. Աղայան**, Երկերի ժող. չորս հատորով, հ. 4., Եր., 1962-1963, էջ 530: Այսուհետ այս հրատարակությունից բերված մեջբերումների հատորն ու էջերը կնշվեն շարադրանքում՝ փակագծերի մեջ:

արկածային դրվագները: «Աղայանի ինքնակենսագրության հուզական-բանաստեղծական ոճը հաճախ խախտում է պատմության ժամանակագրական ընթացքը: Ինչ-որ ասոցիացիաների միջոցով Աղայանը հեշտությամբ թռնում-անցնում է մանկությունից դեպի ապագա և հակառակը»[5],- նկատել է Հ. Մարգունին:

Հիրավի, «Իմ կյանքի գլխավոր դեպքերը» հուշագրության կարևոր առանձնահատկություններից է **հեղինակային նարատիվի ցրվածությունը**. այն յուրօրինակ ռիթմ, ներքին լարվածություն է հաղորդում պատումին՝ ընթերցողի առջև բացելով մերթ մանկական անուրախ տարիների պատկերները, որտեղ երևում են սեփական հորից մերժված գեղջուկ պատանու սրտմաշուկ հածումները, մերթ գալիքի իմաստնացած օրերը, այնուհետև պատումն ստանում է հետընթաց շարժում... Ուրիշ խոսքով՝ ժանրային այս դրվագայնությունը Աղայանի երկն առանձնացնում է մեզ հայտնի համաբնույթ ստեղծագործություններից և մոտեցնում արևմտահայոց, մասնավորապես Զապել Եսայանի «Սիլիհիտարի պարտեզներ»-ին նախորդած հուշագրական նախափորձերին[6]:

Հուշագրության առաջին մասում ներկայացված է գրողի անհատական գործունեությունը, իսկ երկրորդում տեսնում ենք հասարակական գործչին: Հեղինակն ընդգծում է հուշագրական երկի ստեղծման կարևորությունը. «Կես դար ապրելուց հետո՝ ավելին ձգելով արարչի կամքին՝ ես վճռեցի ահա գրել իմ կյանքի գլխավոր դեպքերը, այն դեպքերը, որոնք որևէ կերպով ազդեցություն են ունեցել իմ մտավոր և բարոյական զարգացման վրա» (հ. 4, էջ 325): Այնտեղ զետեղված են Աղայան խորագետի՝ կենսագրական փաստերի, գեղարվեստական և գեղագիտական հայացքների ընդհանրացումները: Նրան հաջողվել է հեղինակային անձնավորման (ինքնակերպավորման) միջոցով ստեղծել մի կերպար, որը ժամանակային զգալի հեռավորությունից գեղարվեստականացնում է իր անցյալը: Սա հենց հուշագրական ժանրի ընձեռած հնարավորությունն է: Այս առումով տեղին է հիշել ռուս տեսաբանի հայտնած կարծիքը. «Հեռավորությունն ու տարածությունը երբեմն արվեստի են վերածում այն, ինչ երբեք չի եղել արվեստ, ուստի ես կարծում եմ, որ ժամանակն ունի այդ տարօրինակ ուժը՝ գեղարվեստականացման շնորհը…»[7]:

Հուշագրության լույսընծայումից հետո գրախոսականով հանդես եկավ «Մուրճի» խմբագիր Ա. Արասխանյանը և արժևորեց այն. «Այդպիսի մի անձի գործունեության պատմությունը շահավետ պիտի լինի ընթերցողների համար մանավանդ այն պատճառով, որ այդ ամբողջ

---

[5] **Հ. Մարգունի,** Ակնարկային գրականության ժանրերը, «Գրական ժանրեր, Պատմական զարգացումը և ժամանակակից վիճակը», Եր., 1973, էջ 481:

[6] Մանրամասն տե՛ս **Ալ. Մակարյան**, Զապել Եսայանի «Սիլիհտարի պարտեզները», «Վէմ», հանդես, Եր., 2016, թիվ 1, էջ 75-79:

[7] **Дикушина Н**. Невыдуманная проза // "Жанрово-стилевые искания в современной советской прозе". М., 1971, с. 156.

պատմվածքում մի կյանք է ներկայացնում ժամանակակից հառաջադիմական ձգտումների, գաղափարական կռիվների, բնորոշ թե՛ անձի համար և թե՛ ժամանակի համար»[8]:

Գրողը ջերմությամբ է պատմում իր ծննդավայր Խաչենի, նրա բնաշխարհի մարդկանց, հպարտությամբ խոսում նախնիների մասին: Մանկության հիշողությունների շղթայում ներկայացված է հոր և որդու բախումը, որ ընտանեկան վեճերի ու անվերջանալի անախորժությունների պատճառ էր դարձել: Հուշագրողը տարիների հեռավորությունից ներկայացնում է իր մանկությունը, դժվարություններով լեցուն բարդ կյանքը: Նա պարծանքով է խոսում իր պապի՝ Աղանց Վեդու մասին, որը գաղթել էր Խաչենի Սեյդիշեն գյուղից: Ավելի վաղ «Արություն և Մանվել» ինքնակենսագրական վեպում իր պապի մասին խոսելիս գրել էր. «Նա գրագետ մարդ էր, և զարմանալի բանն էլ էդ էր, որովհետև հասարակ գրագետ չէր, հայոց պատմության տեղյակ մարդ էր, մինչդեռ նրա ժամանակի հոգևորականները պատմությունից ոչ մի տեղեկություն չունեին» (հ. 1, էջ 54):

1878-ին՝ Շուշիի թեմական դպրոցում աշխատելու տարիներին, Աղայանը հնարավորություն ունեցավ լինելու այդ գյուղում, տեսնելու Աղանց աղբյուրը, ձորը, այգին ու ընկուզենին: Իր ծննդյան տարեթվի հետ կապված՝ Աղայանը հիշատակում է Ակոռիի երկրաշարժը, որ եղել է 1840-ին. «Այդ ժամանակ ծննդյան մատյաններ պահելու սովորություն չկար. մեկի ծննդյան տարին հիշում էին նույն տարին պատահած մի որևէ նշանավոր դեպքով: Իմ ծննդյան տարին նշանավոր դեպքը եղել է այն, որ Մեծ-Մասիսը շարժվել է և Ակոռին տակովն արել, իսկ այդ պատահել է 1840 թվականին» (հ. 4, էջ 326):

Մանկության և պատանեկության հիշողություններին հանդիպում ենք նաև «Արություն և Մանվել» վեպում, այստեղ ուշագրավն այն է, որ հեղինակը տարիներ հետո նկատում է վիպական հյուսվածքի «բացթողումները» և հուշագրության ժանրի միջոցով կատարում որոշ հավելումներ: Ազդեցիկ է հատկապես մանկական տարիների՝ վեպում զանց առնված սիրահարության պատմությունը, որն էլ հոր հետ իր ընդհարման ու դժվարին դեգերումների պատճառ էր դարձել: Հայրը՝ Ավետիքը, հուշագրության էջերում առհասարակ ներկայացվում է որպես դաժան, կամային ընդգծված հատկություններ ունեցող, խստակենցաղ ու խիզախ մի մարդ, որն ի վիճակի չի եղել հասկանալու ձիրքաշատ որդու նրբին ապրումները:

Հոր ճիշտ հակապատկերն էր բարեհամբույր մայրը՝ Հռիփսիմեն՝ Տեր-Անդրիասյանների ընտանիքից: Նա տիպական հայ կնոջ կերպար էր, որն անախորժությունների և վեճերի ժամանակ փորձում էր մեղմել ու խաղաղեցնել ընտանեկան հարաբերությունները՝ երբեմն որ-

[8] «**Մուրճ**», լրագիր, Թիֆլիս, 1894, թիվ 1, էջ 154:

դուն ուղղված հարվածներն իր վրա վերցնելով: Ընտանիքի անդամներին հիշելիս Աղայանը կարծես սակավախոս է. «Մի դյուժին զավակ բերավ մայրս՝ չորս տղա և ութ աղջիկ, որոնցից չորսն իրան էին նման, իսկ ութը՝ հորս: Այժմ ողջ ենք չորս եղբայրքս միայն և չորս քույրս» (հ. 4, էջ 343):

Իր համագյուղացի Մայիկոյին սիրահարվելը, նրա հետևից սարերում թափառելը պատճառ են դառնում, որ հայրը պատանի Ղազարոսին վռնդի տնից: Հետաքրքրական է, որ գրողը պատկերում է մանկության հիշողություններում տպավորված սոցիալական անհավասարությունը, որ դրսևորվել էր ծնողների միակ զավակի՝ Մայիկոյի մասին պատմող հատվածում: Հուշագիրը նրբորեն նկատում է, որ աղջնակը միշտ խնամված էր, զուգված-զարդարված, որն է՛լ ավելի էր մեծացնում նրա բնատուր հմայքն իր աչքում: Այդ սերը դառնում է «նախագեղարվեստական սիրո երգերի» սկիզբ, և հուշագիրն իր զգացածը նմանեցնում է Քյարամի և Ասլիի ազնիվ սիրո ապրումներին: Մանկական առաջին զգացմունքը, որի մասին Աղայանը մեծ ոգևորությամբ է խոսում, սխալ է ընկալվում իր ընտանիքում. ծնողները կարծում են՝ Մայիկոյի մայրը կախարդել է իրենց որդուն, և սկսվում է նրա նկատմամբ հալածանքի ալիքը: Ավելի ուշ նա հիշում է իր քրոջ՝ Հերիքնազի հարևանությամբ ապրող Մայիկոյին, որն արդեն հարսներ ու թոռներ ուներ: Մայիկոն երբեմն-երբեմն հարցնում էր Ղազարոսի առողջության մասին՝ խուսափելով վերջինիս հետ հանդիպումից: Տերտերի կամ հոր հանդիմանությունները ոչ թե մեղմացնում, այլ, ընդհակառակը, ավելի էին սաստկացնում մանկան հոգում բույն դրած սիրո առաջին սրտմաշուկ զգացումը: Մանկական սիրահարության դառը պտուղները ճաշակած որդին հոր կողմից երկրորդ անգամ է վռնդվում տնից՝ իբրև «աստծու ծրից դուրս եկած անառակ որդի»: Սա խոր հիասթափություն և հոգեբանական անկումներ է առաջացնում պատանու փոթորկուն հոգում: Նա իրեն մեղավոր է զգում այդ անմեղ զգացմունքի համար և ապավինում Աստծու ողորմածությանը. «Տէ՛ր, մի՛ յիշեր զմեղս մանկութեան իմոյ...» (հ. 4, էջ 330):

Մարդկային բարդ փոխհարաբերությունները Ղազարոսին անժամանակ հասունացնում են, ստիպում հասկանալ ավելին, քան պետք էր այդ տարիքում: Այս դեպքում հերոսն անջատվում է այն միջավայրից, որ կաշկանդում էր լուսավորությունը և առաջընթացը: Նա ձգտում է տարբերվել բոլորից և ինքնուրույնության մղումով հասնել կատարելության: Ինքնուրույնությունը, ըստ հուշագրի, «մի կաղապարով ձուլված հասարակությունից» տարբերվելն է: Իր թափառական և դժվարին կյանքի մասին հետագայում ահա ինչ է գրում Աղայանը. «Ես ընկա երկրիս օվկիանոսը, ինչպես մի հեքիաթական աշխարհի մեջ, ինչպես մի առասպելական, այլ ոչ իրական կյանքի մեջ: Այդ կյանքի հետ ես բնավ ծանոթություն չունեի, դրսի կեղևն էի տեսել և շատ հավանել,

բայց չգիտեի, որ նա մի զարդարուն գերեզման է, չգիտեի, որ նրանում զարհուրելի գազաններ և միջատներ կան…» (հ. 4, էջ 331):

Հարուստ և բովանդակալից է գրողի պատկերած կյանքը՝ լեցուն միջավայրի և դեպի ուսումը ձգտող անհատի՝ այդ նույն միջավայրի քարացած բարքերի դեմ պայքարով, նոր աշխարհը ճանաչելու և այնտեղ իր տեղը գտնելու որոնումներով: Հարթ չի եղել Աղայանի անցած ուղին: Խավարի մեջ թաղված հայ գյուղի հարազատ զավակի՝ ուսման նկատմամբ ունեցած անհագ ծարավը պատանի Ղազարոսին դրդում է համարձակ քայլերի: Նա կարողանում է տեսնել իրականության բացասական այն կողմերը, որոնք խոչընդոտ էին դարձել մարդկային առաջընթացի և կրթության. «Եթե բանականների մեջ չլիներ այս հատկությունը, լուսավորությունը առաջ կերթար անընդհատ և հսկայական քայլերով, բայց այսպիսի բան չկա բնության մեջ, ամեն կենտրոնախույս զորություն ունի և իր կենտրոնաձիգը» (հ. 4, էջ 325):

Մանկության տարիների հուշ-մտորումներն ամբողջական են դարձնում գլխավոր հերոսի նկարագիրը: Գրողը ներկայացնում է հայ գյուղի պատկերը իրական գույներով. «Գյուղի մեծերի մեջ գրագետներ չկային, իսկ մանուկների մեջ միակ գրագետը ես էի: Քահանա անգամ չունեինք, կարգ պատահած ժամանակ ուրիշ գյուղերից էինք քահանա բերում, որոնք մաշտոցն անգամ կարդալ չէին սովորել, այնքան բթամիտ էին: Այսպիսի մթության և խավարի մեջ լուսատտիկն անգամ ճրագ կթվա: Զարմանալի չէ ուրեմն, որ ես մի հրաշք թվայի գյուղացոց աչքումը» (հ. 4, էջ 340):

Հուշագրության մեջ հեղինակն ազնվորեն խոստովանում է, որ դեռ փոքր տարիքից իր զարմանալի ունակություններով առանձնացել է շրջապատից ու ձգտել «երևելի մարդ» դառնալ. դա որոշակի ազդեցություն է թողել իր անհատականության ձևավորման վրա՝ հաճախ միախառնվելով ինքնասիրահարվածության հատկանիշներին: Աղայանն անթաքույց նշում է, որ գոռոզությունն ու ինքնասիրահարվածությունն իր ժառանգական հատկություններն էին, որ բնորոշ էին թե՛ հայրական, թե՛ մայրական կողմին: Դրա վառ դրսևորումն է ինքնակենսագրական վեպը. ««Արություն և Մանվել» վեպը իմ ինքնասիրության արդյունքն է: Ինձ հարկավոր էր մի հերոս. ծանոթներիս մեջ ինձանից լավը չգտա: Քան թե պիտի երևակայեի և խելքիս զոռ տայի, ավելի լավ համարեցի՝ ստուգապատում լինելու համար, բուն իրողությունը, իմ իսկապես տեսածն ու լսածը վիպական ձևի տակ ձգել» (հ. 4, էջ 341):

Ինքնուրույնության և կատարելության ձգտող պատանի Ղազարոսը 1853-ին ընդունվում է Թիֆլիսի Ներսիսյան դպրոցի վերջին դասարան: Ժամանակի արևելահայ կրթության և մշակութային նշանավոր կենտրոն այս քաղաքում էր ապրում նրա քույրը՝ Օսանը: Սկզբում որպես գրաշար աշխատում է Էնֆիաճյանի տպարանում և հնարավորություն է ստանում փոքր-ինչ մեղմելու նյութական անձկությունն ու

զբաղվելու կրթությամբ: Էնֆիաճյանը և նրա տպարանը հեղինակի կյանքում դառնում են լուսավոր կետեր՝ առջևը բացելով նոր ուղիներ ու զարգացման հեռանկարներ: Ղազարոսի հաջողություններով և ձեռքբերումներով հպարտացող հայրն արդեն հաշտվելու եզրեր է փնտրում որդու հետ: «Օրինավոր մարդ» դառնալու համար գրողը, հարկավ, ամենից առաջ պարտական էր Էնֆիաճյանին և հենց նրա միջոցով է ծանոթություն հաստատում ժամանակին համբավավոր «Կռունկ» ամսագրի սրբագրիչ Պերճ Պռոշյանի հետ, դառնում նրա գրաշարը: «Մի երես մեր նորագույն պատմությունից» կենսագրական տվյալներ բովանդակող հոդվածում Աղայանն արտահայտվել է ժամանակի գրական կյանքում կարևոր նշանակություն ունեցող թերթերի և պարբերականների մասին. ««Կռունկն» էր, որ ազատ էր երկու ծայրերից, նա միջին ճանապարհ բռնած, Հայոց աշխարհի իրաբնակ և տարաբնակ որդոց մեջ տարածում էր ազգային-բարոյական լուսավորության պահանջն ու կարիքը» (հ. 4, էջ 283):

Աղայանը Պռոշյանին հիշում էր դեռևս Ներսիսյան վարժարանում ուսանելու ժամանակներից, երբ վարժապետները Պռոշյանին էին մատնացույց անում՝ իբրև դպրոցի ուսյալ և առաջադեմ սանի: Հուշագրողը բարձր է գնահատում Պռոշյանի վաստակն ու ներդրումը ազգային գրականության զարգացման գործում. «…Պռոշյանցը մեծ ծառայություն է մատուցել ազգային գրականությանը և կրթությանը, և ազգը պարտական է նրան պահպանելու, պարտական է ապահովելու նրա ծերության օրերը կենսաթոշակով» (հ. 4, էջ 346):

Թիֆլիսում սովորելու տարիներին գրողը կտրուկ էր արտահայտվել ժամանակի հոգևոր առաջնորդներից Ներսես կաթողիկոսի մասին՝ մասնավորապես ընդգծելով նրա ինքնակալ կառավարման ձևը, ամեն ինչին միջամտելու նրա հակվածությունը և պաշտոնների նշանակումները:

Տպարանում աշխատելու տարիներին կյանքի բովով անցած Աղայանն առանձնանում է իր աշխատասիրությամբ, ընթերցասիրությամբ, ստեղծագործելու տաղանդով: Նա դառնում է տպարանի հիմնադրի՝ Էնֆիաճյանի սիրելին, մի կարճ ժամանակահատվածում տպարանական հասարակ գրաշարից դառնում վարպետ: Թիֆլիսյան այդ տարիները նպաստում են գրական-մտավորական շրջանակների հետ նրա շփումներին, ծանոթություններին: Աղայանը մտերմանում է նշանավոր սայաթնովայագետ Գևորգ Ախվերդյանի, բանասեր Գարեգին Սրվանձտյանցի հետ: Ժամանակաշրջանի հայկական իրականության մասին խոսելիս նա նշում է, որ հունձ շատ կար, բայց մշակը սակավ էր, իսկ աճող հավատացյալների համար հովիվ չկար:

Տպարանական տարիները հատկանշվում են գրական առաջին ստեղծագործությունների տպագրություններով: Աղայանի գրական երախայրիքը «Հարկավոր է օգնել չքավորներին» բանաստեղծությունն

էր, որ 1862 թ. մայիսին տպագրվել էր «Մեղու Հայաստանի» լրագրում: Որպես գրական նախափորձ՝ այն բավականին խորությամբ էր ներկայացնում ժողովրդի տխուր վիճակը՝ պայմանավորված ուսման, արհեստի կարոտությամբ: Տպարանում աշխատելու ժամանակ Աղայանի ստեղծագործությունները հավանության են արժանանում շրջապատի կողմից: Իր տպարանական ընկերոջ՝ Միքայելի հետ Աղայանը ճանապարհ է ընկնում Հյուսիսային Ռուսաստան: Բավական ծանր պայմաններում նյութական զգալի կարոտություն ունեցող գրողը վճռում է գնալ Թեոդոսիա՝ Խալիպյան տպարան՝ աշխատելու և Մոսկվա հասնելու համար գումար հայթայթելու: Այստեղ ևս քիչ չէին դժվարություններն ու խոչընդոտները: Աղայանը ներկայացնում է Հարություն Խալիպյանի դիմաստվերը. «Այդ ժամանակ Թայղանումը բնակվում էր մի ավելի մեծ ձուկ, կատարյալ լևիթան, որին կարող էինք ավելի թանկ ծախել… հ. Այվազյանի վրա» (հ. 4, էջ 354):

Հայր Այվազյանի ճիշտ հակապատկերն էր նկարիչ Հովհաննես Այվազովսկին: Աղայանը Թեոդոսիայում անցկացրած օրերից մի հետաքրքրական դեպք է պատմում վերջինիս տան գողության մասին: Չերքեզի շորեր հագած գողերի որոնումը կասկածանքի տակ է առնում նույնատիպ հագնված հեղինակի և Միքայելի անմեղությունը: Սակայն Այվազովսկին նրանց ազատում է կասկածյալների կազմից: Այվազովսկի եղբայրների մասին Աղայանը գրում է. «Երկու Այվազովսկիները ջոկ-ջոկ աստղի տակ էին ծնված: Աշխարհային փառքը մեկի ետևից էր վազում, մյուսի՝ առջևից: Նկարիչը չէր կարող փառքի ճանկերից ազատվել, որքան էլ փախչեր նրանից, իսկ նրա եղբայրը իզուր էր չարչարվում փառքի ետևից հասնելու» (հ. 4, էջ 358):

Հայր Այվազյանը մեծ դժկամությամբ «տասը մանեթ» է տալիս Ղազարոսին և Միքայելին: Աղայանը ներկայացնում է ժամանակի հայ հասարակական-քաղաքական կյանքում կենտրոնական տեղ զբաղեցրած անձանց: Հայր Այվազյանի մասին խոսելիս նա շատ կտրուկ է արտահայտվում. «Այվազյան վարդապետն անմատչելի էր իր ստորադրյալների համար Թեոդոսիայում. նա իր փառքի վերին ծայրումն էր ավելի ևս բարձրանալու: Այդպես չէր նա Թիֆլիսումը իր եպիսկոպոս և առաջնորդ ժամանակ. շատ էր խեղճացել և դառել դյուրընտել» (հ. 4, էջ 356): Տարիներ անց նա հիշում է այդ գումարի մասին, և Գևորգ կաթողիկոսի մոտ տասնչորս տարվա հեռավորությունից հայտարարում է դա: Աղայանը վիրավորված է արտահայտվում այդ շրջանակների նույնատիպ պահվածքի մասին՝ դառնությամբ նշելով. «Այստեղ իրանք հազարներով էին կուլ տալիս անհաշիվ, իսկ մեզ տված 10 մանեթի համար խնայողություն էին ցույց տալիս» (հ. 4, էջ 358): Հուշագրի հայացքից չեն վրիպում Գաբրիել քահանա Այվազովսկու հետադիմական հայացքները, որոնք, ինչպես ինքն է կարծում, ազգի համար կործանարար ազդեցություն են ունենում, քանի որ «նրան կտանե նախապատմական խավար դարեր»:

Մեծ դժվարությամբ բեռնակիր սայլով հուշագրողը Միքայելի հետ ուղևորվում է Մոսկվա: Երկու հայ երիտասարդներ հայտնվում են Ստ. Նազարյանցի տպարանում: «Հյուսիսափայլի» խմբագիրն այնքան էլ բարեհամբույր չի գտնվում նրանց նկատմամբ, երբ լսում է, որ հայ են և աշխատանք են խնդրում:

Գրաշարի աշխատանքի համար Ղազարոսն ու Միքայելը դիմում են Մսեր Մսերյանցի տպարան: Վերջինիս մասին Աղայանը միանգամայն դրական է արտահայտվում. նա նման չէր իրեն հանդիպած մյուս մարդկանց: Որոշ ժամանակ այստեղ աշխատելուց հետո Աղայանը Միքայելին թողնում է Մոսկվայում և միայնակ տեղափոխվում Պետերբուրգ, ուր գիտության ճեմարանի տպարանի արևելյան լեզուների բաժնում գրաշար է աշխատում: Արդիական տպարանի գույքն ու աշխատանքի արագությունը, իրեն աշխատանք և կացարան տված գերմանացի Լեմանի վերաբերմունքն ու աջակցությունը հիացնում են Աղայանին: Հակառակ սրա՝ հուշագիրը դառնությամբ է հիշում Հովհաննես և Ռափայել Պատկանյաններին. «… Լավ ծանոթացա ամենի էլ կյանքի բնորոշ գծերին, բայց ես չեմ ուզում գրել, որովհետև իմ նպատակս չէ ուրիշների կենսագրությունն անել, մանավանդ, որ դրանց կենսագրությունները զուրկ են բարոյական կողմերից» (հ. 4, էջ 375): Ըստ Աղայանի՝ Ռ. Պատկանյանը օրվա մեջ 24 գույն ցույց տվող, բարոյակրթությունից զուրկ մարդ էր, բայց երբ ծանոթանում է նրա հորը, հասկանում է, որ հոր համեմատ որդին հրեշտակ է:

Պետերբուգի գրական միջավայրն իր բարերար ազդեցությունն է ունենում Աղայանի գրական-ստեղծագործական կյանքում: Գրական շրջանակների հետ քննարկումները, երիտասարդական հավաքները, ուսանողական ժողովների ժամանակ ընթերցվող գրական երկերը հայ երիտասարդությանը համախմբելու, գրական-հասարակական կյանքին աշխուժություն հաղորդելու միտում ունեին: Հավաքույթների մասնակիցների թվում էին Գրիգոր և Անդրեաս Արծրունի եղբայրները, Սեդրակ Մադինյանը, Ռուբեն Ջալալյանը և այլք: Այստեղ էլ Աղայանը նոր երկ է պատրաստում խմբակի հաջորդ քննարկման համար: Կուտակված մտավոր ներուժը Աղայանին ստեղծագործելու ակնթարթներ է պարգևում, և նա համարձակորեն գրում է. «Միթե ես պակաս կգրեմ, քան թե Ռափայել Պատկանյանը, քան թե Նազարյանցը» (հ. 4, էջ 382):

Հեղինակը մեծ ոգևորությամբ է խոսում «Արություն և Մանվել» վեպի ստեղծագործական ընթացքի մասին. «Գրիչս չէր կարողանում հասցնել թղթին զգացմունքներիս բուռն և արագ հոսանքը: «Երանի քառասուն ձեռք ունենայի այս բոպեիս»,- ասում էի ես» (հ. 4, էջ 390): Այդ վեպը գրել է բուռն ներշնչանքով և ստեղծագործական մի բռնկումով: Իր այդ վիճակը Աղայանը նմանեցրել է Խ. Աբովյանի՝ «Վերք Հայաստանին» գրելու գործընթացին: Ստեղծագործող մարդու հոգեվիճակի, ներշնչանքի ոգևորությունը հեղինակը համեմատել է բնության երկուս-

քի հետ: Աղայանի երկը մեծ ոգևորությամբ է ընդունվում ուսանողական ժողովի կողմից:

Աղայանը առիթ է ունենում ծանոթանալու Ռաֆֆու հետ: Զրույցի ընթացքում Ռաֆֆին գովաբանում է Աղայանի վեպը՝ նշելով. «Ես կարդացի ձեր «Արություն և Մանվելը» և ինձ վրա շատ խոր տպավորություն գործեց, այդպիսի գրվածք չկա մեր մեջ» (հ. 4, էջ 428): Իսկ Ռաֆֆու մասին Աղայանն ասում է, որ ուներ վառ երևակայություն և կյանքից ստացած պաշար:

1865 թ. Պետերբուրգում Աղայանը առիթ է ունենում ծանոթանալու Միքայել Նալբանդյանի հետ: Նրան բնութագրելիս անմիջական համեմատություն է տանում Պատկանյանի հետ՝ գրելով. «Նալբանդյանի տաղանդը, մտավոր զարգացումը, լեզվի հարստությունը անհամեմատ բարձր էր Ռ. Պատկանյանից, իսկ բնավորությամբ շիփ-շիտակ էր Նալբանդյանը, ինչպես ուղիղ վեր բարձրացող մի բարդի, մինչդեռ Պատկանյանցը մի տատասկ էր փռված գետնի երեսին, որի մոտով անցնել չէր կարելի անպատիժ» (հ. 4, էջ 402):

Պետերբուրգից Հայաստան վերադարձած Աղայանը 1868-ին Գևորգ կաթողիկոսի կողմից Էջմիածնի տպարանում աշխատելու հրավեր է ստանում: «Արարատ» ամսագրի խմբագրի պաշտոնն ստանձնած Աղայանին նոր փորձություններ էին սպասում արդեն հոգևոր միջավայրում: Այս պարբերականում գրողը հրապարակում է «Խորհրդածություններս դաստիարակության վրա» աշխատությունը՝ մեկնաբանելով դաստիարակության նորագույն մեթոդները: Նրա տպագրած նյութը և «Արարատի» խմբագրությունը գնահատելի վերաբերմունքի են արժանանում Պետերբուրգի և Թիֆլիսի մտավորականների կողմից: Էջմիածնի հոգևոր միջավայրի պահպանողականությունն ու խավարով լի միջավայրը, սակայն, միանշանակ չընդունեցին գրողի առաջադեմ գաղափարներն ու բերած նորությունները: Այդ միջավայրում իր թշնամական վերաբերմունքով հատկապես առանձնացավ Մանկունին, որի մասին Աղայանը գրում է. «...Մանկունին սկսեց քիչ-քիչ ոտքն առաջ դնել, սկսեց նախանձել: Նա շատ էր աշխատում, բայց նրա արածը չէր երևում, պատիվն ինձ էին տալիս: Նա էր իմ և վեհափառի մեջտեղը եղող մարդը, իմ պահանջներս նա էր տեղ հասցնում և անհապաղ կատարել տալիս, բայց այդ չէր երևում, ոչ ոք դրա համար նրան շնորհակալություն չէր անում: Սրա համար ահա նա մտածեց, որ ինձ դուրս անել տա և իմ պաշտոնն ինքը կատարե» (հ. 4, էջ 473): Հուշագրողը հստակ ներկայացնում է հայոց հոգևոր կենտրոնում տիրող իրավիճակը. «Արծաթասիրությունը, սիմոնականությունը վիշապի կերպարանք էր ստացել, և կուլ էր տալիս դրսից ու ներսից եկած մուտքերը: Մանկունին բավականին ազատ էր պահում իրեն այդ ախտից, բայց հետզհետե դուրս մղեց ուտողներին և ինքը բռնեց ամենքի տեղը: Ձեռք առնելով վեհափառի ուժը, այսինքն նրա բարեհաճությունը, նրանով տիրեց ամենքին» (հ. 4, էջ 442):

Այդ միջավայրում կային նաև Մանկունու տեսակին հակադիր կերպարներ. նրանցից էին Ներսես վարդապետ Խուդավերդյանը, Գրիգոր եպիսկոպոս Մուշեղյանը և այլք:

Հոգևորականների թույլ տված անարդարություններն ու ապօրինությունները չհանդուրժելով՝ Ղ. Աղայանը 1870 թ. սկզբներին հեռանում է եկեղեցուց: Սկսվում է Աղայանի մանկավարժական գործունեության երկարատև շրջանը: Սկզբում նա պաշտոնավարում է Ախալցխայում, ապա՝ Երևանում, Շուշիում, Թիֆլիսում, Վաղարշապատում, Բաքվում: Մանկավարժության նկատմամբ սերը նկատվել էր դեռևս Պետերբուրգում: Այդ ժամանակ հայկական կրթական մշակույթը խղճուկ վիճակում էր. ուսումը՝ աղքատիկ, մեթոդները՝ քարացած: Աղայանը, կրթությունից զատ, դպրոցական միջավայրում կարևորում էր բարոյական միջավայրի պատկերը: Նա հոգևոր և մտավոր ներդաշնակության մեջ էր պատկերացնում մտավոր առաջընթացը և կրթական գործի կազմակերպումը: Աղայանն սկսում է ուսումնասիրել եվրոպական մանկավարժների՝ Պեստալոցցիի, Ֆրեռբելի, Դիստերվեգի և այլոց գործերը:

Շուշիում որոշ ժամանակ ուսուցչական պաշտոն վարելուց հետո Աղայանը վերադառնում է Թիֆլիս՝ միանգամայն հիասթափված ուսուցչության ասպարեզից: Այստեղ նրան նոր ոգևորություն էր սպասում, որի առիթը տիկին Սոֆիա Բաբայանցի մանկապարտեզն էր: Այդ աշխատանքի համար նա պարտական էր պետերբուրգյան տարիների իր ընկերոջը՝ Ավետիք Բաբայանին: Վերջինս, տեսնելով Աղայանի ջլատված վիճակը, նրան խորհուրդ է տալիս հանգստանալ: Բաբայանի համեստ բնութագրումով՝ Աղայանը հարկավոր էր մանկապարտեզին, որ ազգային-ժողովրդական տարրեր մտցներ պարտեզի մեջ և ազգային ծաղիկներ բուսեցներ: Այս աշխատանքն Աղայանին թույլ է տալիս մտածելու, որ ինքը «զարմանալի աստղի տակ է ծնված», որ իր ձեռք բերած բարոյական և մտավոր հարստությունը բախտավորություն է: Նվիրվելով մանկական գրականությանը՝ Աղայանը կազմում է «Ուսումն մայրենի լեզվի» դասագրքերից երկուսը:

Հուշագրության մեջ Աղայանն իր առաջին սիրահարվածության մասին խոսում է մանկությունը ներկայացնելիս: Մայիկոն Ղազարոսի միակ դասընկերն էր Շամշուլդայի ծխատեր քահանա տեր Պետրոսի մոտ ուսումնառության ժամանակ: Հուշագրության հետագա էջերում, երբ Աղայանը բավական հասուն մարդ էր և արդեն հայտնի անհատականություն, Մոսկվայում սիրահարվում է Վառվառա Պետրովնային: Այդ զգացմունքը միանգամայն տարբեր էր փոքր հասակում զգացածից: Վառվառային Աղայանը ներկայացնում է որպես կիրթ, բազմակողմանի զարգացած, ազատամիտ գաղափարներ ունեցող աղջկա, բայց նա խորությամբ հասկանում էր, որ չէր կարող կյանքը կապել օտար միջավայրում մեծացած, միանգամայն այլ մշակույթ կրող աղջկա հետ:

1868 թ. Թիֆլիսում հայ օրիորդի հետ ճակատագրական հանդիպումը շրջում է Ղազարոսի կյանքի ընթացքը՝ մեկընդմիշտ նրան կապելով այդ աղջկան: Պատահական հանդիպումից երեք օր անց Աղայանը նշանադրվում է Եփրեմիայի (Փեփելի) հետ: Նրանց հարսանիքը տեղի է ունենում 1868 թ. հոկտեմբերի 22-ին: Աղայանը և Փեփելը համատեղ կյանքի ընթացքում ունենում են վեց երեխա, որոնցից երկուսը՝ Սոնան և Հայկը, մահանում են մանուկ հասակում՝ խոր վիշտ պատճառելով ծնողներին:

Երկու զավակների կորստին հետևում է մյուս զավակի՝ Վիգենի կորուստը: Այդ կսկծից մահանում է Փեփելը՝ Աղայանի խնամքին թողնելով երեք անչափահաս երեխաներին: Հարազատ մարդկանց կորստից հետո գրողի կյանքում դժվարին շրջան է սկսվում. «Շատ անգամ է պատահել, որ ես ուզեցել եմ մի անխորհուրդ և անմիտ բան բռնել, մի հիմարություն անել, բայց աստված ազատել է ինձ այդ փորձանքից» (հ. 4, էջ 499):

Շիրվանզադեն իր «Կյանքի բովից» հուշագրության մեջ հիշատակում է Աղայանի այդ դժվարին վիճակը, բայց որոշ ժամանակ անց, երբ հանդիպում է Աղայանին, ներկայացնում է նրա կերպարանափոխությունը՝ պայմանավորված նրա երկրորդ ամուսնությամբ. «Նա ինձ ծանոթացրեց իր կնոջ հետ, որ նույնպես այրի էր, բայց անզավակ»[9]:

Աղայանն իր հուշագրությունն ավարտում է խոր լավատեսությամբ. «Ես նորոգվեցի հոգով և մարմնով, և սրա արդյունքն եղավ իմ «Արեգնազան»-ը, «Տորք»-ը և սրանց հաջորդող գրածներս»: Հուշագրությունն ավարտում է հետագայում որոշ փոփոխությունների ենթարկած «Լուսնահաչ» բանաստեղծության նախնական տարբերակով.

Բայց լուսինը բակ բոլորած՝ շարունակում էր իր ճամփան,
Համարելով թե չի լսում, որ իր վրա հաչողներ կան... (հ. 4, էջ 500):

Աղայանի հուշագրության ճանաչողական և գեղարվեստական արժեքն անցյալի դեպքերին և իրադարձություններին գեղագիտորեն մոտենալու, ժամանակակից գործիչների հետ ունեցած առնչությունների միջոցով նրանց բնութագրելու և հուշերը վերարտադրելու հեղինակային ինքնատիպ մոտեցման մեջ է: Գրողը ներկայացրել է ժամանակաշրջանի ազգային-հասարակական կյանքում տեղ գտած խնդիրները, հայկական կենցաղին բնորոշ հատկանիշները՝ արժևորելով և հաճախ ցույց տալով դրանցում տեղ գտած թերություններն ու բացթողումները: Երկն արժեքավոր է մասնավորապես բարքերի գեղարվեստական պատկերների հարստությամբ: Հուշագրության կերպարակերտմանը հատուկ են զուգահեռ հակադրությունը, հերոսների բևեռացման միջոցով մեզ հայտնի գործիչների կերպարակերտումը: Կերպարները որքանով էլ որ վավերական են, այնուամենայնիվ, Աղայանը կտրուկ է

[9] **Ալ. Շիրվանզադե**, Երկերի ժողովածու հինգ հատորով, հատոր 5, Եր., 1988, էջ 197:

իր բնութագրումներում ու երբեմն՝ սուբյեկտիվ: Նա հայտնի անձանց ներկայացնում է սևի և սպիտակի միջակայքում, իսկ գործողությունների և մարդկային բարդ փոխհարաբերությունների կենտրոնում՝ իրեն: Դրանցում զգալի է անձնական տարրի գերակշռությունը, բնութագրումները՝ երբեմն ծայրահեղ:

Ամփոփելով նկատենք, որ Ղազարոս Աղայանի՝ «**Իմ կյանքի գլխավոր դեպքերը**» հուշագրական արժեքավոր երկը մարդկային ներաշխարհի բացահայտման, ստեղծագործական ընթացքի, ձեռքբերումների և բացթողումների մասին հեղինակի անձնական դիտարկումների ամբողջություն է: Արևելահայ գրական արձակում նոր սկիզբ առած գրական այս ժանրը հեղինակային ինքնատիպ լուծումների շնորհիվ մեզ տարաբնույթ դիտարկումների հնարավորություն է ընձեռում՝ իր ամբողջության մեջ ցույց տալով ժամանակի գրական-մշակութային կյանքի և 19-րդ դարի երկրորդ կեսի հայ հասարական կյանքի ողջ գունապնակը:

Բանալի բառեր - *ժանր, դիմանկար, միջավայր, վավերագրական, արկածային դրվագներ*

АННА ТОРОСЯН – ***Охват времени и пространства в мемуарах Г. Агаяна «Главные события моей жизни».*** – В статье рассматривается книга воспоминаний Газароса Агаяна, составляющая часть его мемуарного наследия. Хронологически воспоминания объемлют 50-е – начало 90-х гг. XIX в. и не просто излагают автобиографические факты, но дают широкое и наглядное представление о тогдашнем быте армян, их культурной жизни, яркими красками рисуют целый ряд событий и лиц.

Ключевые слова: *жанр, портрет, среда, документальное письмо, приключенческие эпизоды*

ANNA TOROSYAN – ***The Temporal-Spatial Scope in the Memoir "The Major Events of My Life" by Ghazaros Aghayan.*** – In the article, we examine "The Major Events of My Life", which is part of the memoir legacy of Ghazaros Aghayan. The memoir "The Major Events of My Life", which covers the events of the 1850s up to the beginning of the 1890s, is not merely a collection of biographical facts, but a piece of writing which gives a comprehensive idea of the Armenian social life of the very period: it depicts Armenian cultural life based on historical documentary materials, revealing a number of events and individuals through different events.

Key words: *genre, portrait, environment, documentary, adventure episodes*